


# St. Mesrob Armenian Apostolic Church

4605 ERIE STREET • RACINE, WISCONSIN 53402



Ս. ՄԵՍՐՈՊ ՉԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
ԱՐՏԻՆ ԱՒԱԳ ԲՆԵՑ ԱՇՃԵԱՆ, ՀՈՎԻ

REV. ARTEN ASHJIAN, Pastor

TEL. 639-0531

ՅուՆուար 29: 1977

Գերաշնորհ  
Տէր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Թեմիս Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք, Ն. Ե.

Տարեկան Ծխական ժողովի գումարման կապակցութեամբ Ձեր գրաւոր հրահանգին ի պատասխան կը փութամ ղրկել հետեւեալները.-

1. ժողովի հրաւեր եւ օրակարգ (տեսնել գրքոյկի սկիզբի բաժնին մէջ)։
2. Ծխական Խորհուրդի ընտրութեան թեկնածուներու երկպատիկ ցանկ։
3. Գործունէութեան եւ ելեւմտական տեղեկագիրներ: Կը պակսի Դպրաց Դասու տեղեկագիրը: Առաջարկուած պիտճէի պատրաստութիւնը եղած է մետասաներորդ ժամու, եւ հովիւը բաժին չէ ունեցած անոր պատրաստութեան մէջ, եթէ չհաշուենք ամիսներ առաջ հովիւին կողմէ գրաւոր տրուած յանձնարարութիւններ:
4. Հովիւի թոշակի առնչութեամբ Ձեր 7 ՅուՆուար 1977 թուակիր հրահանգի նմանահանութեան կցուած իմ ներկայ կացութիւնս պարզող հաշիւ մը, որմէ օրինակներ ցրուած եմ մեր Ծխական Խորհուրդի անդամներուն եւ թեմական պատգամաւորներուն:

Ծուխիս տարեկան ծխական ժողովը պիտի գումարուի վաղը: Հոս, կը թուի թէ հին եկեղեցւոյ օրերէն մնացած աւանդութիւն եղած է Ս. Պատարագի աւարտումէն ետք տուն վերադառնալ, ճաշել, փոքրիկները տուն ձգել եւ եկեղեցի վերադառնալ ժամը 2ին ժողովի սկսելու համար: Մեր այս զեռօ աստիճանէն նուազ ցուրտին եւ սառնաշունչ քամիին տեսնենք թէ ժողովը օրինաւոր կերպով սկսելու համար պիտի ունենանք բաւարար թիւով ներկաներ:

Եթէ Տէրը կամենայ, եթէ մտադիր էք Արքոց Ղեկնողեանց Տօնին Առաջնորդարան հրաւիրել հոգեւորականները, եւ եթէ կլիման թոյլատու լինի, կը փափաքիմ ֆետր. 13էն ետք մի քանի օր գտնուիլ Առաջնորդարան եւ անձնապէս տեսնել Ձեզ:

Մնամ,

մատչելով ի համբոյր Ս. աշուղ  
ակնածանօք,

*Արտէն Աւագ*  
Արտէն Աւագ ԲՆԵՑ ԱՇՃԵԱՆ